ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 Նոյեմբերի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

163
(3013)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՅԱՐԱՄՅԱՆԸ ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ Է ԱՂԱԶԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի նախկին նախագահ Արգիշտի Քյարամյանին հրավիրել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե՝ հարցաքննության: Քյարամյանը առանց նախագահ մնացած կոմիտեում ցուցմունք է տվել այն մասին, որ իրեն երկու անգամ դիմել են ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանի որդու ներգրավմամբ քննվող քրեական գործով:

«Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրները հայտնում են, որ Արգիշտի Քյարամյանը նախաքննական մարմնում պատմել է, որ ՔՊ-ական Հովիկ Աղազարյանի որդին, օգտվելով օրենքի բացից, (որը օրենսդիր հայրը չի նախաձեռնել կարգավորել), մեծաքանակ ավտոմեքենաներ է ներկրել ՀՀ, արտահանել, ապա պետությունից ստացել է ԱԱՀ-ի վերադարձ, որը անօրինականություն է. հենց դրա համար են Աղազարյանի որդու ավտոմեքենաները գտնվում արգելանքի տակ:

«Ժողովուրդ» օրաթերթը, հղում անելով իր աղբյուրներին, հայտնել էր, որ երկու անգամ Աղազարյանի որդու գործով դիմում է ուղղվել ՀՀ քննչական կոմիտե, եւ երկու անգամ էլ դիմողը եղել է հենց ինքը՝ Հովիկ Աղազարյանը:

Պատգամավոր Աղազարյանը, օգտագործելով իր պատգամավորական լծակները, առաջին անգամ դիմել է գործը վարող քննիչին, երկրորդ անգամ՝ ՔԿ նախագահի տեղակալ Արսեն Այվազյանին՝ համոզելով նրանց, որ իր որդու արգելանքի տակ գտնվող մեքենաները հանեն կալանքից: Մեր իրազեկ աղբյուրների փոխանցմամբ՝ գործը քննող քննիչը Աղազարյանի դիմումը փոխանցել է իր վերադասին, վերադասը հայտնել է Արգիշտի Քյարամյանին, իսկ Քյարամյանն էլ մերժել է: Երկրոդ անգամ, երբ Աղազարյանը դիմել է ՔԿ նախագահի տեղակալ Արսեն Այվազյանին, վերջինս այդ մասին տեղյակ է պահել Արգիշտի Քյարամյանին ու կրկին ստացել է մերժում:

Այս իրավիճակում Աղազարյանը, ենթադրաբար, խախտել է նախ՝ «Պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքը, որի 3-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ կետերը սահմանում են. «Պատգամավորի լիազորություններն իրականացնելիս չառաջնորդվել իր կամ իր հետ փոխկապակցված անձանց անձնական շահերով, չօգտագործել պատգամավորի պաշտոնի հեղինակությունը՝ ի շահ իրեն կամ այլ անձի»: Բացի դրանից՝ քրեական օրենսգրքի 486-րդ հոդվածի 1-ին մասի երկու դրվագով սահմանված է արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելու եւ խոչընդոտելու արգելքը: Իսկ Աղազարյանն իր դիմումով ենթադրաբար փորձել է խոչընդոտել եւ ազդեցություն ունենալ նախաքննության վրա: Այսպիսով՝ Հովիկ Աղազարյանը, բացի կաշառքի վարույթից, որն արդեն նախաձեռնված է, նաեւ երկու այլ ենթադրյալ օրինախախտումներ է թույլ տվել, ինչի համար ՀՀ գլխավոր դատախազը պետք է մտնի ԱԺ եւ Աղազարյանին պատգամավորական անձեռնմխելիությունից զրկի պառլամենտի միջոցով՝ հարուցելով մեղադրանքներ նրա նկատմամբ: Իսկ եթե մինչ այդ նա մանդատը վայր դնի, թերեւս այս քրեական ենթադրյալ հանցանքները կներվեն, կմոռացվեն:

«Ժողովուրդ» օրաթերթի ՔՊ-ական աղբյուրները փոխանցում են, որ Երեւանի փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանը պատասխաններ է պահանջում ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանից՝ իրեն վարկաբեկելու եւ որպես կոռուպցիոներ դիտարկելու համար: Բանն այն է, որ դեռ հոկտեմբեր ամսին լրագրողները Անդրանիկ Քոչարյանին հարցրել էին՝ հնարավո՞ր է, որ որոշ ՔՊ-ականներ իրենից դժգոհություններ ունեն, ինչպես, օրինակ, Հրաչյա Հակոբյանը, Տիգրան Ավինյանը, Արմեն Փամբուխչյանը, Սիսակ Գաբրիելյանը: Քոչարյանը պնդել էր, որ տեղյակ չէ, բայց կոնկրետ միջադեպ հիշեց Երեւանի փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանի հետ կապված, երբ դիմել էր նրան «Արագած» ռազմարդյունաբերության գործարանի հոսքագծերի հետ վերաբերյալ խնդրով, սակայն, ինչպես հետո պարզվել է, խնդիրը Փամբուխչյանը չի լուծել: Անդրանիկ Քոչարյանը շարունակել էր նաեւ. «Մեկ էլ կարդացել եմ իր մասին «Հետք»-ում գրված հոդվածը՝ կապված «Սպայկայի» 1,5 մլրդ դրամ վարկավորման հետ»: Հարցին՝ այսինքն Արմեն Փամբուխչյանը կոռուպցիոնե՞ր է՝ Անդրանիկ Քոչարյանը պատասխանեց, որ չի կարող ասել, քանի որ չեն կարող հայտարարել մի բան, քանի դեռ քննություն չկա. «Բայց ինձ մտահոգում է «Սպայկայի» հետ առնչվող պատմությունները» հրապարակավ ասել էր Քոչարյանը: Հիշեցնենք, որ ՔՊ վարչության անդամ Արմեն Փամբուխչյանի 71-ամյա հայրը 40 հեկտար հողեր է ձեռք բերել Արմավիրի մարզում՝ դեղձի այգիներ հիմնելու համար: Փամբուխչյանը այս նպատակով նաեւ 1,5 միլիարդ դրամի վարկ է ստացել բանկից եւ 102 մլն դրամ (մոտ 270 հազար ԱՄՆ դոլար) պետությունից՝ որպես սուբսիդիա՝ նվեր: Բացի այս պատմությունից, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, Անդրանիկ Քոչարյանը ՔՊ-ականների մոտ վստահ պնդել է, թե Երեւանի փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանի ԱԺ նախկին պատգամավոր Միհեր Սեդրակյանի որդուց՝ Դավիթ Սեդրակյանից, ավտոմեքենա է նվեր ստացել, թաքցրել հանրությունից, իր թիմից: «Ժողովուրդ» օրաթերթը այս հարցադրումներով դիմել էր Արմեն Փամբուխչյանին՝ պարզելու, թե որքանով են իրական այս տեղեկությունները, եւ պատրաստվում է արդյոք Արմեն Փամբուխչյանը աշխատանքից ազատման դիմում գրել եւ հրաժարվել Երեւանի ավագանու իր մանդատից. սակայն Փամբուխչյանը, մեր այս հարցերին ի պատասխան, նշեց, որ տեղեկությունները իրականությանը չեն համապատասխանում: Տեղեկացնենք, որ Արմեն Փամբուխչյանը 2021 թվականին գնել է LEXUS մակնիշի մեքենա, իսկ ահա փոխքաղաքապետի կինը տարվա ընթացքում մեքենաներ է գնել եւ վաճառել:

Ինկոլ Փաշինյանը 6 պաշտոնյայի հեռացրեց պաշտոնից, որից երկուսի նշանակման մասին հայտնեց վաղ առավոտյան ֆեյսբուքյան ստատուսով, սակայն հեռացված վեց պաշտոնյաներից մեկի ընտրությունը եզակի պահանջ է, քանի որ բացառիկ նշանակման կարգ է սահմանված: Համաձայն Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի՝ «Մրցութային խորհրդի ձեւավորումը եւ գործառույթները սահմանվում են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար»: Այսինքն՝ ձեւավորվում է մրցութային խորհուրդ: «Ժողովուրդ» օրաթերթը «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ղեկավար Դանիել Իոանիսյանից տեղեկացավ, թե որն է ընթացակարգը, եւ ովքեր պետք է լինեն Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության համար ձեւավորված թիմում: «Ստեղծված խորհրդի կազմում ներառվում է 1 կամ մի քանի անձ Ազգային ժողովից, 1 անձ դատախազությունից, 1 անձ Վճռաբեկ դատարանից, 1 անձ ՄԻՊ գրասենյակից եւ մեկ անձ վարչապետի աշխատակազմից, եւս 2 անձ՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ: Խորհուրդը անցկացնում է ընդունելություն. մասնավորապես, թեկնածուները դիմելու են խորհրդին, ներկայացնեն բազմաթիվ փաստաթղթեր, անցնեն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում բարեվարքության ստուգում, ապա բարեվարքության վերաբերյալ եզրակացության հետ անցնեն դռնբաց հարցազրույց: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պաշտոնի առաջադրման հայտարարությամբ դիմելու է նաեւ հասարակական գործիչ Էգար Ղազարյանը եւ ՀՀ դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչության պետի պաշտոնակատար Վարուժան Ղահրամանյանը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Էդգար Ղազարյանը չբացառեց, որ հնարավոր է մասնակցի:

Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցությունը արդեն հավաքել է ընդդեմ տրանսպորտի թանկացման նախաձեռնության համար անհրաժեշտ քանակությամբ ստորագրությունները: Խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեց՝ որպեսզի նախագիծը Երեւանի ավագանու նիստում քննարկի, անհրաժեշտ է Երեւանի՝ ընտրելու իրավունք ունեցող ավելի քան 8 հազար բնակչի ստորագրություն, բայց իրենք մի բան էլ ավելի շատ ստորագրություն են հավաքել՝ մոտ 10 հազար: «Մայր Հայաստան»-ը, սակայն, մտադիր է դեռ մի քանի օր էլ շարունակել ստորագրահավաքը, որից հետո նախաձեռնությունը մուտք կանեն քաղաքապետարան: Մանուկ Սուքիասյանը հայտնեց, որ ամեն ինչ անելու են, որ ավագանու տարեվերջյան՝ դեկտեմբերի նիստին նախաձեռնությունն արդեն օրակարգ մտնի: Եթե ավագանու նիստում նախագիծը մերժվի, ապա ընդդիմադիրներն այս հարցը դնելու են հանրաքվեի: Հիշեցնենք, որ «Մայր Հայաստան»-ը պահանջում է անփոփոխ՝ 100 դրամ թողնել տրանսպորտի գինը:

ԶՐՈՒՅՑ

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ 6-ԻՑ ԴԱՐՁԵԼ Է 12 ՄԼՐԴ ԴՐԱՄ

ArmLur.am-ի հետ զրույցում «Ազատություն» կուսակցության նախագահ, «Միասին շարժման» համանախագահ, նախկին վարչապետ, պրոֆեսոր Հրանտ Բագրատյանը խոսել է պետական պարտքի, ՀՆԱ-ի աճից, որի պատճառները խաղադրույքներն են:

Հրանտ Բագրատյանը նաեւ նշել է մի քանի թվեր, կանխատեսել է, թե ինչպես է աճելու պետական պարտքը, բյուջեի դեֆիցիտը:

-Պարոն Բագրատյան, 2025 թվականի բյուջեի կատարողականի քննարկումը այս պահին բավականին արդի ու կարեւոր հարց է: Ազգային ժողովն օրերս քննարկում էր 2025 թվականի պետական բյուջեն: Ավանդույթի համաձայն՝ ամեն տարվա բյուջե ունենում է իր անվանումը: Սովորաբար, լինում է, օրինակ, «ծայրը ծայրին հասցնել,» կամ «բյուջե, որ կբավարարի», ինչպե՞ս կանվանեք այս՝ 2025 թվականի բյուջեն:

-Ես նախ անվանեմ դրա հիմնական առանձնահատկությունը, ասենք՝ «Հայաստանի Հանրապետության գոյության 33 տարիների ընթացքում սա առաջին բյուջեն է, երբ մենք արտաքին պարտք ենք վերցնում, բայց նախկինում վերցված արտաքին պարտքի սպասարկումն ավելին է, քան թե վերցված արտաքին պարտքը: Այսպես՝ այս բյուջեով իրենք վերցնում են եւս 2 միլիոն պետական պարտք, բայց պետական պարտքը սպասարկելու համար նույն բյուջեով նախատեսված է 2.5 միլիարդ դոլարի ծախս: Գիտեք, դա ժամանակի ընթացքում պետք է պատահեր, չէր կարող սա լինել 2005 կամ 1995 թվականին, որովհետեւ, հատկապես վերջին շրջանում, բարձր տոկոսով վերցված է ներքին պարտք, եւ գալու է մի պահ, երբ արդեն պարտքը վերցնելու են, բայց այն չի բավականացնելու նախկինում վերցված պարտքի տոկոսը փակելու համար անգամ:

Նախկինում վերցված պարտքի մարումը նախատեսված է 1 տրիլիոն 120 միլիարդ դրամ, եւ դա ավելի քան 2.5 միլիարդ դոլար է. պետական պարտքի շեմը կբարձրանա եւս 2 միլիարդով եւ կարող է հասնել մինչեւ 14.5 -15 միլիարդ դոլարի: Այսինքն՝ մենք ընկել ենք այն օրը, ինչ Միացյալ Նահանգները: ԱՄՆ-ն ամեն տարի իր պարտքը սպասարկում է. այդ պարտքը կազմում է ՀՆԱ-ի 50 տոկոսը, բայց ԱՄՆ-ն դոլար ունի, երբ նա տպում է այդ դոլարը, նշանակում է, որ Միացյալ Նահանգների գործող պարտքի սպասարկմանը մասնակցում են բոլոր երկրները, բարդում է դա բոլոր երկրների ուսերին, համամասնական չափով՝ նաեւ մեր ուսերին է բարդում, սա հասկանալի է, բայց երբ երկրի փոխարժեքը փոխարկելի չէ, երբ մեր պետական արժեթղթերը միայն մենք ենք գնում՝ ուրիշ ոչ ոք, ահա մեզ նման երկրները եւ մենք կհայտնվենք շրջապտույտի մեջ:

«2025-ի բյուջեն ազգային շրջապտույտի առաջին բյուջեն է»: Այդպես կարելի է անվանել, քանզի նույնիսկ 2024-ին բյուջեի վիճակն այսպիսին չէր:

Շարունակությունը կարող եք կարդալ ArmLur.am կայքում

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՓԱՇԻՆՅԱՆԻՆ «ՆԿԱՐԱԾ» ԹՎԵՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանի անակնկալ պաշտոնանկությունից հետո ՊԵԿ-ում դեռ փնտրտուքների մեջ են՝ ինչու Նիկոլ Փաշինյանը, որը երբեք հրապարակավ դժգոհություն չի հայտնել Բադասյանի աշխատանքից, հանկարծ որոշեց հեռացնել նրան:

«Ժողովուրդ» օրաթերթին բացառիկ մանրամասներ են հայտնի դարձել՝ ով է կանգնած Բադասյանի պաշտոնանկության հետեւում:

Այսպիսով, «Ժողովուրդ» օրաթերթին պատմեցին, որ տարիներ շարունակ գործադիրում ընդունված պրակտիկա է եղել, որ ֆինանսների նախարարը եւ ՊԵԿ նախագահը քննարկում եւ համատեղ զեկույց են ներկայացնում Կառավարություն, թե այդ տարվա համար տնտեսական ինչ կանխատեսումներ ունեն, ինչպես են պետբյուջեի շարժն ապահովելու:

Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը, սակայն, առանց Բադասյանի հետ քննարկելու «նկարած» թվեր է ներկայացրել Փաշինյանին, բայց երբ եկել է տարեվերջյան ամփոփումների ու զեկուցներ ներկայացնելու ժամանակը, Նիկոլ Փաշինյանը պարզել է, որ այդ թվերը իրականությունից հեռու են, ու սպասելիքները արդարացված չեն:

Բադասյանն, իհարկե, փորձել է պարզաբանել, որ դա միայն իր աշխատանքից կախված չէ, սակայն՝ իզուր, Փաշինյանն իր որոշումը կայացրել է:

Փաստորեն, Վահե Հովհաննիսյանի «նկարած» թվերի համար Ռուստամ Բադասյանն իր պաշտոնով է պատասխան տվել:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԶԵՅՆԱԼՅԱՆԸ ՄԱՆԴԱՏԸ ՎԱՅՐ ԴՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ

Ազգային ժողովից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեցին, որ քիչ առաջ Նարեկ Զեյնալյանը մանդատը վայր դնելու վերաբերյալ դիմում է ներկայացրել ԱԺ նախագահին:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ԱԺ նախագահը դեռ ո՛չ Նարեկ Զեյնալյանից, ո՛չ էլ Հովիկ Աղազարյանից հրաժարականի դիմում չի ստացել:

«Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր՝ Նիկոլ Փաշինյանը հոկտեմբերի 15-ի խայտառակ միջադեպերով ուղեկցված ԱԺ լսումներից հետո Նարեկ Զեյնալյանին ու Հովիկ Աղազարյանին մանդատից զրկելու որոշում էր կայացրել:

Զեյնալյանն «ինքնակամ» հեռացավ՝ սոցցանցի իր էջում հրապարակավ հայտնելով այդ մասին, Աղազարյանը, սակայն, համառորեն դեռ մանդատի կռիվ է տալիս ու հրաժարվում է կատարել Փաշինյանի որոշումը: Չնայած որ վարչության՝ նոյեմբերի 19-ի կայացած նիստին Հովիկ Աղազարյանը կանչվել է վարչություն, ու նրա մանդատը վայր դնելու որոշումը ՔՊ-ականներն արձանագրել են միաձայն, բայց նա համառում է, թե վարչությունը չի կարող իրեն պարտադրել մանդատը վայր դնել:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ԱԺ նախագահը դեռ Նարեկ Զեյնալյանից եւ Հովիկ Աղազարյանից մանդատը վայր դնելու վերաբերյալ դիմում չի ստացել:

«ԱԺ կանոնակարգ» օրենքի 155-րդ հոդվածը սահմանում է՝ «Պատգամավորը հրաժարականի մասին իր գրավոր դիմումը պաշտոնապես ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին, ով այդ մասին հանդես է գալիս հայտարարությամբ»:

Եթե հրաժարականի հրապարակումից հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում, պատգամավորը գրավոր դիմումով՝

1) հետ է վերցնում հրաժարականի մասին իր դիմումը, ապա Ազգային ժողովի նախագահն այդ մասին հանդես է գալիս հայտարարությամբ.

2) հետ չի վերցնում հրաժարականի մասին իր դիմումը, ապա նրա լիազորությունների դադարման մասին կազմվում է արձանագրություն, որն ստորագրում եւ հրապարակում է Ազգային ժողովի նախագահը: Արձանագրության հրապարակման պահից հրաժարականը համարվում է ընդունված:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ-ԱՎԻՆՅԱՆ ԲԱՆԱՎԵՃ

Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը համաձայնել է բանավիճել Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի հետ:

«Ընդունում ենք Factor TV-ի առաջարկը՝ բանավեճ անցկացնել Տիգրան Ավինյանի հետ՝ իշխանության բերած տրանսպորտի թանկացման ծրագրի շուրջ:

Քանի որ քաղաքապետարանից խնդրել են երկրից բացակայելու բերումով հետաձգել բանավեճը, ապա առաջարկում ենք այն կազմակերպել դեկտեմբերի 15-20-ն ընկած ժամանակահատվածում»,- Facebook-ում գրել է Մարությանը:

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ

Հայաստանում 2025-ի փետրվարի 4-ից մինչեւ ապրիլի 18-ը նախատեսվում է անցկացնել պահեստազորայինների վարժական հավաքներ:

Համապատասխան որոշման նախագիծը Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում ներկայացրել է ՀՀ պաշտպանության նախարարությունը:

Որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է պահեստազորի առաջին խմբում հաշվառված շարքային, ենթասպայական եւ սպայական կազմերի պահեստազորայինների ռազմական հմտությունների կատարելագործման, վերապատրաստման եւ պատրաստման, ըստ անհրաժեշտության, պահեստազորայիններին մարտական հերթապահության ներգրավելու անհրաժեշտությամբ:

Վարժական հավաքների ընթացքում յուրա-քանչյուր քաղաքացի ներգրավվում է ոչ ավելի, քան 25 օրացուցային օր ժամկետով:

ՆՈՐ «ԿՈՉԵՐ»՝ ԲԱՔՎԻՑ

Խաղաղությունը Հարավային Կովկասում մոտ է, քան երբեւէ: Ադրբեջանին եւ Հայաստանին կոչ ենք անում բաց չթողնել այս պատմական հնարավորությունը:

Այս մասին հայտարարել է Թուրքիայի արտգործնախարար Հաքան Ֆիդանը:

«Մենք պահպանում ենք մեր երկկողմ հարաբերությունները Ադրբեջանի հետ ամենաբարձր մակարդակով եւ համատեղ ջանքեր ենք գործադրում բազմաթիվ միջազգային խնդիրների լուծման համար: Մենք ողջունում ենք Հայաստանի ընտրությունը՝ ի նպաստ խաղաղության եւ կայունության եւ կոչ ենք անում երկու երկրներին բաց չթողնել այս պատմական հնարավորությունը»,- ասել է նա:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՆՉ Է ՍՊԱՌՆՈՒՄ ՆԵԹԱՆՅԱՀՈՒԻ ՕԳՆԱԿԱՆԻՆ

Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուի գրասենյակի մամուլի հետ աշխատանքի հարցերով օգնական Էլի Ֆելդշտեյնը կարող է ցմահ բանտարկության դատապարտվել ազգային անվտանգությանը վնասելու համար: Այդ մասին հաղորդում է The Times of Israel-ը:

Պարբերականի տվյալներով՝ Ֆելդշտեյնը, որը համարվում է գլխավոր կասկածյալը, մեղադրվում է պետությանը վնաս հասցնելու նպատակով գաղտնի տեղեկատվություն փոխանցելու, գաղտնի տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի ապօրինի պահման եւ արդարադատությանը խոչընդոտելու մեջ: Նրան սպառնում է ցմահ ազատազրկում:

Ըստ հրապարակման՝ այդ գործով եւս մեկ կասկածյալի՝ Իսրայելի պաշտպանության բանակի պահեստայինի, որի անունը չի հրապարակվել, սպառնում է 7 տարվա ազատազրկում՝ գաղտնի տեղեկատվություն փոխանցելու համար:

Մեղադրող կողմը ենթադրում է, որ Ֆելդշտեյնը ռազմական հետախուզության չորս զինծառայողների միջնորդությամբ գաղտնի տվյալներ է ստացել Իսրայելի պաշտպանության բանակի տվյալների բազայից եւ դրանք փոխանցել Իսրայելի վարչապետի գրասենյակ: Հրապարակման մեջ նշվում է, որ նա այդ փաստաթղթերից մեկը նաեւ հանձնել է Bild հրատարակությանը:

Ըստ NBC News-ի՝ փաստաթղթերը կապված են եղել ՀԱՄԱՍ-ի հետ եւ նպատակ են ունեցել ՋԼՄ-ներում հրապարակվելու միջոցով ցույց տալ, որ իսրայելցի պատանդների ընտանիքների ցույցերը ձեռնտու են պաղեստինյան շարժմանը:

ԱՄՆ–Ն ՆԱԽԱՊԵՍ ՏԵՂԵԿԱՑՎԵԼ Է ՀՐԹԻՌԻ ԱՐՁԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

ԱՄՆ-ն Ռուսաստանից նախապես ծանուցում է ստացել Ուկրաինայի տարածք առանց միջուկային մարտագլխիկի բալիստիկ հրթիռի արձակման մասին: Այս մասին հայտնել է Պենտագոնի մամուլի քարտուղարի տեղակալ Սաբրինա Սինգհը: «Միացյալ Նահանգներն արձակումից կարճ ժամանակ առաջ նախազգուշացվել է միջուկային ռիսկի նվազեցման ալիքների միջոցով», - ասել է նա նոյեմբերի 21-ին կայացած ճեպազրույցում:

Նա նաեւ վստահեցրել է, որ Միացյալ Նահանգները կշարունակի աջակցել Ուկրաինային եւ երկրին ռազմական օգնության նոր փաթեթներ ուղարկել ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի վարչակազմի պաշտոնավարմանը մնացած ժամանակահատվածում:

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը նոյեմբերի 21-ի տեսաուղերձում հայտարարել էր, որ ի պատասխան ամերիկյան եւ բրիտանական հեռահար սպառազինությունների կիրառման, Ռուսաստանի զինված ուժերը միջին հեռահարության նորագույն «Օրեշնիկ» հիպերձայնային հրթիռներով հարվածել են Ուկրաինայի ռազմարդյունաբերական համալիրի օբյեկտին:

ԷՆԵՐԳԵՏԻԿ ՈԼՈՐՏ

ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թուրքիան եւ Ադրբեջանը սերտ կապեր ունեն ոչ միայն մշակութային, այլեւ՝ տնտեսական բնագավառում: Այս առումով նրանց հարաբերություններում էական նշանակություն ունի էներգետիկ ոլորտը, քանի որ երկուսն էլ հանդիսանում են դեղի Եվրոպա նավթի եւ բնական գազի խոշոր մատակարարներ: Այնուամենայնիվ՝ այս երկրների միջեւ ժամանակ առ ժամանակ շահերի բախում է տեղի ունենում նավթի եւ գազի գնագոյացման ու մատակարարման հարցում:



Թուրքիայի եւ Ադրբեջանի էներգետիկ հարաբերություններում կարեւոր դերակատարում ունեն Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղն ու Անդրանատոլիական բնական գազի խողովակաշարը (TANAP): Վերջինիս միջոցով Ադրբեջանի Շահ Դենիզ հանքավայրից Թուրքիայի տարածքով բնական գազը տեղափոխվում է Եվրոպա: Այն Հարավային գազային միջանցքի կենտրոնական մասն է, որի նպատակն է նվազեցնել Եվրոպայի կախվածությունը ռուսական գազից: Ինչ վերաբերում է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարին, ապա այն խոշոր նավթամուղ է, որը միացնում է Կասպից ծովի տարածաշրջանը Միջերկրական ծովին՝ անցնելով Վրաստանի տարածքով:

Հարկ է նշել, որ ադրբեջանական գազը Թուրքիայի համար միշտ ավելի էժան է եղել, քան՝ Ռուսաստանից եւ Իրանից արտահանվող գազը: Թուրքիան փորձում է պահպանել մրցակցային գները՝ Եվրոպայում ավելի շատ գնորդներ ներգրավելու եւ ներքին ծախսերը նվազեցնելու համար:

Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ գնագոյացման հետ կապված տարաձայնությունները տեսանելի են դարձել հատկապես Արցախյան 44-օրյա պատերազմից եւ ուկրաինական ճգնաժամից հետո: Եվրոպայում ադրբեջանական գազի նկատմամբ հետաքրքրությունն սկսեց մեծանալ, երբ 2020 թվականի վերջին շահագործման հանձնվեց Տրանսադրիատիկ գազատարը (TAP): Արդյունքում՝ սկսվեցին գազի ուղիղ մատակարարումները դեպի Եվրոպա՝ մեծացնելով Ադրբեջանի քաղաքական կշիռը: Եթե մինչեւ 44-օրյա պատերազմն Ադրբեջանն էներգետիկ ռեսուրսները ծառայեցնում էր իր օգտին՝ Արցախի խնդրի լուծման համար, ապա այժմ հարցը լուծված է համարում եւ փորձում է այդ ռեսուրսներն օգտագործել՝ իր դիրքերն ամրապնդելու եւ էներգետիկ այլ նախագծեր ֆինանսավորելու համար: Նա ձգտում է մեծացնել նաեւ Թուրքիա արտահանվող գազից ստացվող եկամուտները, հատկապես՝ Հարավային գազային միջանցքով՝ անմիջապես Եվրոպա գազ մատակարարելու շնորհիվ: 2021 թվականին երկու երկրների միջեւ որոշակի լարվածություն առաջացավ TANAP խողովակաշարի եւ գազային այլ համաձայնագրերի գնագոյացման շուրջ: Այդ թվականին պետք է երկարացվեր TANAP-ի՝ քսան տարի տեւած պայմանագիրը, սակայն կողմերը շուրջ մեկ տարի համաձայնության չէին գալիս գնագոյացման հարցում: Այն թարմացվել է միայն երկարատեւ բանակցություններից հետո՝ առանց հատուկ արարողակարգի՝ փոստային նամակագրության միջոցով՝ ընդամենը կնքելով ժամանակավոր պայմանագիր: Միայն 2024 թվականի հունիսին BOTA-ի (Թուրքիայի պետական նավթագազային ընկերություն) եւ Ադրբեջանի գազամատակարարման ընկերության միջեւ կնքված պայմանագրով ադրբեջանական գազի արտահանումը Թուրքիա երկարաձգվեց մինչեւ 2030 թվականը:

Այսպիսով՝ թուրք-ադրբեջանական տնտեսական հարաբերությունները զերծ չեն խնդիրներից: Թուրքիան, շահարկելով «եղբայրական երկրներ լինելու» հանգամանքը եւ Ադրբեջանին ցուցաբերած օգնությունը (հատկապես՝ ռազմական ոլորտում), մշտապես ձգտում է ադրբեջանական նավթն ու գազը ձեռք բերել ավելի էժան գներով, ինչը ձեռնտու չէ Ադրբեջանին, սակայն վերջինս ստիպված է հաշվի առնել իր «մեծ եղբոր» շահերը՝ ի վնաս սեփական եկամուտների:

ԱԴՐԲԵՋԱՆԻՆ ԿՈՉ ԵՆ ԱՐԵԼ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼ ՋՈՐՔԵՐԸ ՀՀ ՏԱՐԱԾՔԻՑ

Քաֆվում ընթացող COP 29-ի առիթով Բելգիայի Դաշնային, Ֆլանդրիայի, Վալոնիայի եւ Բրյուսելի խորհրդարանների 20 անդամ դիմել է Ադրբեջանի կառավարությանը եւ COP 29-ին մասնակից Բելգիայի կառավարության պատվիրակությանը երեք հիմնական պահանջով.

Ազատություն Ադրբեջանում գտնվող հայ ռազմագերիներին, ԼՂ հայկական մշակութային ժառանգության պաշտպանություն, ադրբեջանական ուժերի դուրսբերում Հայաստանի Հանրապետության օկուպացված տարածքից, ինչպես նաեւ՝ Հայաստանի Հանրապետության դեմ ադրբեջանական ցանկացած ագրեսիայի զսպում:

Հայտարարությունը ստորագրել են Բելգիայի հիմանական քաղաքական կուսակցությունները՝ MR, Les Engagns, DnFI, N-VA, CD&V, Vooruit եւ Groen: Առաջին երեքի դեպքում հայտարարությունը ստորագրել են անձամբ կուսակցությունների ղեկավարները:

Բելգիացի քաղաքական գործիչները նախ շեշտել են, որ որպես COP 29-ը ընդունող երկիր՝ Ադրբեջանը պարտավոր է շոշափելի հավատարմություն ցուցաբերել մարդու իրավունքների, մարդու արժանապատվության եւ արդարության հիմնարար սկզբունքների նկատմամբ: Նրանք նաեւ նշել են իրենց պահանջները՝ հիշեցնելով 2020 թվականի դեկտեմբերի 16-ից հետո Բելգիայի Դաշնային, Ֆլանդրիայի եւ Վալոնիայի խորհրդարանների կողմից ընդունված՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ բանաձեւերը:

Այդ, ինչպես նաեւ 2021 թվականի մայիսից եւ 2024 թվականի հոկտեմբերից հետո Եվրոպական խորհրդարանի ընդունած բանաձեւերին համահունչ՝ բելգիացի քաղաքական գործիչներն Ադրբեջանի կառավարությանը կոչ են արել.

անհապաղ եւ անվերապահորեն ազատ արձակել Բաքվում պահվող բոլոր հայ ռազմագերիներին, պատանդներին եւ գերիներին՝ ներառյալ Լեռնային Ղարաբաղի ռազմաքաղաքական ղեկավարությունը

ապահովել Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային եւ կրոնական ժառանգության՝ ներառյալ վանքերի խաչքարերի անձեռնմխելիությունը: Զերծ մնալ դրանց ալբանացումից, ինչպես նաեւ պատմական վերանայումներից

զերծ մնալ Հայաստանի Հանրապետության դեմ սպառնալիքներից եւ ցանկացած ագրեսիայից, դուրս բերել ադրբեջանական զինուժը Հայաստանի Հանրապետությունում օկուպացված տարածքներից:

Բացի այդ, համահեղինակները Բելգիայի կառավարության պատվիրակությանը կոչ են արել COP 29-ին մասնակցության ընթացքում գործել վերը նշված խորհրդարանական բանաձեւերի ոգուն համահունչ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԻՆՉ ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ ԷՐ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՈՎ

Պարզվել են Հյուսիսային պողոտայի նախկին տարածքում մի շարք քաղաքացիների սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը խարդախությամբ եւ փաստաթղթերի կեղծմամբ ձեռք բերելու դեպքերի էական մի շարք հանգամանքներ:

Ինչպես տեղեկանում ենք Քննչական կոմիտեի տարածած հաղորդագրությունից, քննությամբ պարզվել է, որ անշարժ գույքի գնահատում իրականացնող ՍՊ ընկերության տնօրեն Հ.Ա.-ն օժանդակել է Երեւան քաղաքի Աբովյան-Արամի-Նալբանդյան փողոցներին հարող տարածքում գտնվող անշարժ գույքը ձեռք բերող եւ կառուցապատող հանդիսացող ՍՊ ընկերության տնօրեն Ա.Կ.-ի կողմից մեկ միասնական դիտավորությամբ խաբեության եւ վստահությունը չարաշահելու եղանակով թվով 12 սեփականատերերից առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուրը 666.765.500 ՀՀ դրամի անշարժ գույք եւ դրամական միջոցներ հափշտակելուն, ինչպես նաեւ իրացրել է իրավունք վերապահող ակնհայտ կեղծ պաշտոնական փաստաթղթեր:

Այսպես, 2001թ. հուլիսի 16-ին ՀՀ կառավարությունը համապատասխան որոշմամբ հաստատվել է Երեւանի Հյուսիսային պողոտայի հատվածում գտնվող՝ պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքերի (հողամասեր, շենքեր եւ շինություններ) օտարման գոտին՝ 82700 քառակուսի մետր տարածքով, որում պետության կարիքների համար վերցվող օտարման գոտու սահմանների մեջ, ի թիվս այլ գույքերի, ընդգրկվել եւ իրացման ենթակա են դարձել նաեւ Երեւան քաղաքի Աբովյան-Նալբանդյան-Արամի փողոցների հարող տարածքում գտնվող մի շարք հասցեների անշարժ գույքերը:

Նույն որոշմամբ Երեւանի քաղաքապետին լիազորվել է երկամսյա ժամկետում իրացման ենթակա տարածքում լիցենզավորված համապատասխան կազմակերպությունների միջոցով կազմակերպել եւ իրականացնել անշարժ գույքի գնահատման աշխատանքները:

Միաժամանակ, Երեւանի Հյուսիսային պողոտայի կառուցապատման գոտում գտնվող հողամասերն ու անշարժ գույքը գնելու, վերցնելու կապակցությամբ քաղաքացիներին եւ իրավաբանական անձանց հատուցում տրամադրելու հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, ՀՀ կառավարության՝ 2001թ. հոկտեմբերի որոշմամբ հաստատվել է Երեւանի Հյուսիսային պողոտայի օտարման գոտում գտնվող հողամասերը եւ անշարժ գույքը գնելու, վերցնելու կապակցությամբ քաղաքացիներին ու իրավաբանական անձանց գնային առաջարկի ձեւավորման եւ իրացման կարգը, որով սահմանվել է նաեւ, որ գնվող, վերցվող անշարժ գույքի համար հատուցումը, բացի դրամականից, կարող է կատարվել նաեւ այլ գույքով՝ հողամասի, բնակելի կամ ոչ բնակելի շինության տեսքով, այլ անշարժ գույքի սեփականության իրավունքով տրամադրմամբ՝ հատուցման գնի մեջ դրա արժեքի հաշվանցմամբ:

ՀՀ կառավարության՝ 2004թ. որոշմամբ Հյուսիսային պողոտայի՝ Աբովյան-Արամի-Նալբանդյան փողոցներին հարող հատվածից 8620,0 քառակուսի մետր հողամասը կառուցապատման ներդրումային ծրագիր իրականացնելու նպատակով տրամադրվել է կառուցապատող ՍՊԸ-ին, որի տնօրենը հանդիսացել է Ա.Կ.-ն:

Շարունակությունը ArmLur.am կայքում:

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԵԿ ՕՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է 4 ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂ ՆԳՆ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝նոյեմբերի 20-21-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 129 դեպք, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված: Այս մասին տեղեկացնում են ՀՀ ՆԳՆ-ից:

Մասնավորապես, բացահայտվել է տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու՝ 40, թմրանյութի հայտնաբերման՝ 17, մարմնական վնասվածք պատճառելու՝ 11, խարդախության՝ 10, ֆիզիկական ներգործության ու անձնական ունեցվածքի գողության՝ 8-ական, խուլիգանության՝4, հոգեկան ներգործության, զենք-զինամթերքի առգրավման ու սառը զենքի հայտնաբերման՝3-ական, թմրանյութի իրացման եւ ծառերը, թփերը ապօրինի հատելու՝ 2-ական, կողոպուտի, պաշտոնեական կեղծիքի կամ անփութության, պաշտոնատար անձի ծառայողական գործունեությանը միջամտելու, ապօրինի կերպով հրազեն, դրա հիմնական բաղկացուցիչ մասեր, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթեցման սարքեր պատրաստելու, ձեւափոխելու կամ նորոգելու, փաստաթղթի կեղծիքի, աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելու, բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու, ալիմենտ չվճարելու, ինքնիրավչության, սուտ մատնության, էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության միջոցներին ապօրինի միացում կատարելու ու փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր կեղծելու կամ կեղծ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր իրացնելու, պատրաստելու կամ օգտագործելու՝1-ական դեպք:

Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել բնակարանային գողության՝ 2, սպանության, կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի, գույքը ոչնչացնելու կամ վնասելու եւ անձնական ունեցվածքի գողության՝1-ական դեպք:

Հայտնաբերվել է 4 հետախուզվող, կամավոր ներկայացել՝4-ը:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 3 դեպք:

Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 19 պատահար. 1 մարդ զոհվել է, 24-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԼԱՐՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿ՝ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՄՈՏ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Սեւակ Բաբայանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ Հաղթանակի պողոտայի 6 հասցեում տեղակայված Շիրակի մարզի Դատախազության վարչական շենքի մոտ կատարել է խուլիգանություն: Նա հասարակության եւ բարոյական նորմերի նկատմամբ ցուցաբերել է բացահայտ անհարգալից եւ արհամարհական վերաբերմունք, որը դրսեւորվել է հայհոյանքներով եւ անպարկեշտ արտահայտություններով, համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ՝ դեպքի վայրում գտնվող եւ հարեւանությամբ բնակվող անձանց անդորրը խախտելով: ArmLur.am-ին նաեւ հայտնի դարձավ, որ Բաբայանը պաշտոնատար անձինք հանդիսացող՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրու բաժնի օդանավակայանի գծային բաժնի պետ Թ. Թովմասյանի, նույն բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի ավագ տեսուչ Է. Կալկոյանի եւ նույն բաժանմունքի տեսուչ Կ. Ղանդիլյանի օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու նպատակով նրանց նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքներ է հնչեցրել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ

Գեղարքունիքի մարզի պարեկները Երեւան-Սեւան-Իջեւան ճանապարհին ծառայություն կատարելիս ստուգման նպատակով կանգնեցրել են «Ֆորդ» մակնիշի մի մեքենա: 34-ամյա ուղեւորը պարեկներին է ներկայացրել դեղնականաչավուն զանգվածով թղթե փաթեթ եւ կաթուցիչ:

Վարորդը եւ ուղեւորը թմրանյութ պահելու հիմնավոր կասկածանքով ձերբակալվել եւ տեղափոխվել են Համայնքային ոստիկանության Սեւանի բաժին, որտեղ ուղեւորը իրավապահներին հայտնել է, որ ներկայացվածը մարիխուանա է՝ իր անձնական օգտագործման համար:

Նոյեմբերի 14-ին Գեղարքունիքի պարեկները Վարդենիս քաղաքի Վիկտոր Համբարձումյան փողոցում ստուգման նպատակով կանգնեցրել են «ԲԻԴ» մակնիշի մի մեքենա:

Աբովյան քաղաքի բնակիչ 37-ամյա վարորդը պարեկներին է ներկայացրել դեղնականաչավուն զանգվածով պոլիէթիլենային տոպրակ:

Թմրանյութ պահելու կասկածանքով նա ձերբակալվել եւ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Վարդենիսի բաժին, որտեղ պարզվել է, որ վարորդի ներկայացրած 2,59 գրամ զանգվածը մարիխուանա է: Երկու դեպքով էլ կազմված փաստաթղթերն ուղարկվել են նախաքննական մարմին:

ՓՈՐՁԵԼ ԵՆ ՄԻ ԽՈՒՄԲ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԻՑ ԶՐԿԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Լեւոն Վարդանի Երիցյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ապօրինի կերպով ձեռք է բերել եւ կրել ռազմամթերք հանդիսացող ակոսափող հրազենի 9մմ 79ճ18/ տրամաչափի 5 փամփուշտ եւ ինքնաշեն կամ ձեւափոխված ակոսավոր ատրճանակ: Բացի այդ, Արթուր Միհերի Արշակյանի օժանդակությամբ, այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով կատարել է սպանության փորձ, այն է՝հր կողմից ապօրինի կրած ատրճանակով, ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելու դիտավորությամբ, կրակոցներ է արձակել մի խումբ անձանց՝Սլավիկ Հրայրի Հովսեփյանի, Նարեկ Հարությունի Մելիքյանի, Միքայել Արամայիսի Ադալյանի, Գեւորգ Մուշեղի Բաբայանի եւ Արթուր Արմենի Մանուկյանի ողղությամբ:

Սակայն ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ սպանությունը նրա կամքից անկախ հանգամանքներով չի իրագործվել՝ որեւէ անձի կյանքից չզրկվելու հետեւանքով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 21-ից 22-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 129 դեպք, որից 6-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել եմ՝նոյեմբերի 7-ի դրությամբ պետական բյուջեից ընդհանուր որքամն պարգեւավճար են ստացել Տավուշի մարզպետարանի աշխատողները: Նոյեմբերի 7-ի դրությամբ Տավուշի մարզպետարանի միջոցով պետական բյուջեից ընդհանուր որքամն աջակցության գումար են ստացել Տավուշի մարզի սոցիալապես անապահով բնակիչները:

Մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատակիցները նոյեմբերի 7-ի դրությամբ ստացել են 57689,0 հազար դրամի պարգեւավճար: Ֆինանսական աջակցության նպատակով քաղաքացիներից ընդունվել է 1381 դիմում, ս/թ նոյեմբերի 7-ի դրությամբ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի «Այլ նպաստներ» հոդվածով տրվել է 63880,0 հազար դրամ օգնություն»:

ՀԵՌԱՆԿԱՐ Է ԲԱՑՎԵԼ

Երկու տարի առաջ Իջեւանում Հայկ Ղալումյանի մտերիմներից մեկի հետ զրույցի ժամանակ վերջինս ասաց, որ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը շատ է ցանկանում դառնալ ՊԵԿ նախագահ, քանի որ նրան հրապուրում է հարկային, մաքսային եկամուտները վերահսկող այդ պաշտոնը: Աղբյուրն ասաց,որ Նիկոլ Փաշինյանը չի կարողանում իր դասընկեր, իր հարսանիքի քավոր Հայկ Ղալումյանին ՊԵԿ նախագահ դարձնել, որովհետեւ այդ պաշտոնին նշանակելու «քվոտան» պատկանում է Սորոսի հիմնադրամի Հայաստանի գրասենյակի ղեկավար Լարիսա Մինասյանին: ՊԵԿ նախագահի պաշտոնից Ռուստամ Բադասյանի ազատվելուց հետո Հայակ Ղալումյանի համար հեռանկար է բացվում: Հայկ Ղալումյանը որպես Տավուշի մարզպետ առանձնակի հաջողություններ չունի, Տավուշի մարզպետարանը դարձրել է Իջեւանի մարզպետարան. մարզպետարանում նեղ կազմով պարբերաբար խորհրդակցություններ է անում, սակայն մարզում պետական եւ սուբվենցիոն շատ ծրագրեր ձգձգվում կամ ձախողվում են, մարզի հանրակրթական դպրոցներում ցածր է կարգապահությունը եւ այլն: Մարզպետ Հայկ Ղալումյանի պաշտոնավարման օրոք Տավուշի մարզպետարանում 2 նորամուծություն է եղել՝ մարզպետարանը այլեւս կոչում են Տավուշի մարզպետի աշխատակազմ եւ մարզպետարանի շենքի մուտքի մոտ ուղեփակոց են դրել:

ԻՆՉ ՎԻՃԱԿՈՒՄ Է ՃԵՄՈՒՂԻՆ

Տուրիստական Դիլիջան քաղաքի կենտրոնական զբոսայգում կիսատ, չկառուցված շենքի հենասալին գրված է, որ շուտով սիրուն շինություն է լինելու: Զբոսայգում շատ-շատ են շները: Նրանց մի մասի ականջներին պիտակներ կան: Գեղեցիկ զբոսայգու նստարանները պատված են թռչունների արտաթորանքով, ճեմուղում նույնպես կովի արտաթորանք է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Սույն թվականի նոյեմբերի 19-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Հայոց լեզու. նրա զարգացման հիմնական միտումներն ու դրանց արտացոլումն ուսումնական գործընթացում» գիտագործնական համաժողովը, որին մասնակցեց ավելի քան 100 ուսուցիչ Հայաստանի տարբեր մարզերից:

Համաժողովի նպատակն էր ներկայացնել եւ քննարկել լեզվամտածողության, հնչյունաբանության, բառագիտության, ձեւաբանության, շարահյուսության հարցեր:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ակադեմիկոս Յուրի Սուվարյանը: «Ես բարձր եմ գնահատում ձեր առաքելությունը, քանի որ դուք եք սովորեցնում ուղղագրություն եւ ուղղախոսություն: Լեզուն անընդհատ հարստանում է, նոր տերմիններ են առաջանում: ՀՀ ԳԱԱ նախագահության որոշմամբ ստեղծվել է տերմինաշինության մասնագիտական խորհուրդ, որում ընդգրկված են մեր հանրապետության լավագույն լեզվաբանները: Ձեր խնդիրն է աճող սերնդին հասկացնել, որ չնայած տեխնիկական հնարավորությունների աճին, արհեստական բանականության հնարավորություններին, մարդը պետք է կարողանա ճիշտ գրել եւ ճիշտ խոսել իր լեզվով: Լեզվին տիրապետելու համար պետք է շատ կարդալ գրական գործեր եւ անընդհատ լինել լեզու սովորելու ընթացքի մեջ», - ասաց ակադեմիկոս Սուվարյանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրամատչելիացման եւ զարգացման վարչության պետ Կամո Աթայանը նշեց. «Մեր լեզուն հետաքրքիր ու հարուստ է, բայց հասարակական զարգացումները նրա առաջ եւս դնում են խնդիրներ՝ հնարավորինս հղկել, զարգացնել հայերենով ուսուցման լեզուն ու գտնել բարդ գիտությունը յուրաքանչյուրի հնարավորություններին ու ընդունակություններին համապատասխան, հանրամատչելի ներկայացնելու ուղիներ: Ձեր ստանձնած առաքելությունը բարդ ու պատասխանատու է: Այն հաջողված կլինի միայն անհատական գիտական հետաքրքրությունները մշտապես լրացնելու դեպքում»:

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի գիտքարտուղար, Լեզվաբանության ամբիոնի վարիչ, դոցենտ Մերի Սարգսյանը նշեց, որ գիտատեխնիկական զարգացման դարաշրջանում գերխնդիր է կրթության եւ գիտության շաղկապումը: «Այս չափանիշը կրթության որակի ապահովման համաեվրոպական չափանիշներից մեկն է, եւ հենց սա է մեր կենտրոնի ռազմավարության հիմքում: Այսօր հաճախ ենք տարբեր հարթակներից լսում, որ հայոց լեզուն կորցրել է իր դերակատարումը, որ չունի այն մեծ ազդեցությունը, որն ունեցել է նախկինում: Բայց բավական է՝ մուտք գործենք գիտության եւ տեխնիկայի խաչմերուկներից հանդիսացող Ինժեներական քաղաք, կտեսնենք հայագիտությունը ներկայացնող գրառումներ, իսկ Գիտության եւ տեխնիկայի թանգարանում կտեսնենք հայագիտության հսկաներին: Միավորենք մեր ուժերը, ստեղծենք ակադեմիա-բուհ-դպրոց էկոհամակարգի առողջ փոխգործակցություն՝ մեր ուժերը ծառայեցնելու գիտության եւ կրթության հետագա զարգացմանը», - ասաց Մերի Սարգսյանը:

Համաժողովը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ-ն, ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը եւ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ:

ԹԵՄԱՏԻԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐԲԱՆՅԱԿԸ

ԲՏԱ նախարարը հայկական առաջին արբանյակից արված լուսանկարներ է հրապարակել. «Մեր չքնաղ հայրենիքը տարվա տարբեր եղանակներին ԱՐՄՍԱՏ-1-ի կողմից ուղեծրից արված լուսանկարներում», - X-ի իր էջում գրել է Մխիթար Հայրապետյանը:

Լուսանկարներն ամբողջությամբ՝ ArmLur.am կայքում:

ՔԱՆԻ՞ ՄԱՐԴ Է ՏԱՌԱՊՈՒՄ ԱԼԿՈՀՈԼԻՔԶՄՈՎ

Ալկոհոլը հոգեակտիվ, տոքսիկ նյութ է եւ կարող է կախվածություն առաջացնել: Այն խաթարում է կենտրոնական նյարդային համակարգի աշխատանքը՝ մեծացնելով մտածված եւ ոչ մտածված վնասների, ինչպես նաեւ՝ սոցիալական ծանր հետեւանքների առաջացման ռիսկը:

Ալկոհոլի չարաշահումն առաջացնում է զգալի ախտաբանական փոփոխություններ մարսողական եւ սրտանոթային համակարգերում: Այս մասին հոդված է հրապարակել ՀՀ առողջապահության նախարարությունը:

Քաղցկեղի ուսումնասիրման միջազգային գործակալության տվյալների համաձայն՝ ալկոհոլը դասակարգված է որպես քաղցկեղածին:

Ալկոհոլը իմունադեպրեսանտ է, որը մեծացնում է ինֆեկցիոն հիվանդություններով վարակվելու ռիսկը:

Այլ փաստեր ալկոհոլի գործածման վնասակար հետեւանքների մասին՝

ալկոհոլի վնասակար օգտագործումն ավելի քան 200 հիվանդության եւ վնասվածքների առաջացման պատճառ է,

աշխարհում տարեկան շուրջ 3 միլիոն մարդ մահանում է ալկոհոլի գործածման վնասակար հետեւանքով:

Կա պատճառահետեւանքային կապ ալկոհոլի գործածման հետեւանքով առաջացող հոգեկան եւ վարքային խանգարումների, այլ սոմատիկ հիվանդությունների միջեւ:

2023 թվականի վիճակագրական տվյալներով՝Հայաստանում ալկոհոլից կախվածությամբ հաշվառված է 6312 անձ:

2023 թվականի վիճակագրական տվյալներով՝ Հայաստանում ալկոհոլից կախվածությամբ հաշվառված է 6312 անձ:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 19 պատահար. 1 մարդ զոհվել է, 24-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՊԵԿ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԲՈՂՈՔԻՆ

Asekose.am կայքում հրապարակված տեսանյութի վերաբերյալ Պետական եկամուտների կոմիտեն հարկ է համարում տեղեկացնել, որ թե՛ Բագրատաշեն պետական սահմանի անցման կետով եւ թե՛ մյուս անցման կետերով Հայաստանի Հանրապետություն ժամանող քաղաքացիների, վերջիններիս ուղեկցող ուղեբեռների եւ տրանսպորտային միջոցների նկատմամբ իրականացվող մաքսային հսկողության ժամանակ օգտագործված անձնական օգտագործման ապրանքների հայտարարագրման պահանջ որեւէ քաղաքացու չի առաջադրվել: Իսկ նոր ապրանքներն անձնական օգտագործման դիտարկելու մասով մաքսային մարմինների կողմից հաշվի են առնվում քաղաքացու սահմանահատման հաճախականությունը, տեղափոխվող ապրանքների քանակը եւ բնույթը: Ինչ վերաբերում է բողոք ներկայացնող անձի կողմից նկարահանված տեսանյութին, ապա վերջինս, Հայաստան ներմուծելով շուրջ 757 գրամ արծաթյա զարդեր, հրաժարվել է կատարել մաքսային մարմնի՝ օրենքով սահմանված կարգով հայտարարագրում իրականացնելու պահանջը, ինչից էլ ծագել է նշված անձի դժգոհությունը՝ տեսանյութում ներկայացնելով միայն օգտագործված անձնական օգտագործման ապրանքները եւ չնշելով այն հանգամանքը, որ մաքսային մարմնի օրինական պահանջը կապված է բացառապես 757 գրամ տարբեր տեսակի արծաթյա զարդերի հայտարարագրման հետ:

ՊԵԿ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին

ՀԱՅ–ՉԻՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՊԵՐ

Միջազգային գործարար կապերի աջակցման խորհուրդը երկար տարիներ իրականացնում է ամերիկյան, ասիական շուկաներում միջազգային ցուցահանդեսներ, համաժողովներ՝ հայաստանյան գործարարների համար ստեղծելով լայն հնարավորություններ:

Խորհուրդն այս տարի արդեն 2-րդ անգամ է այցելել Չինաստան: Այս անգամ Շանհայում կայացել է «Չինաստան. միջազգային ներմուծում» խոշոր ցուցահանդեսը:

Արդյունքներն ամփոփող ասուլիսով է հանդես եկել խորհրդի նախագահ Մարիամ Մանուկյանը:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ

8 բնակավայր միավորող Նաիրի համայնքի 2024 թ. սուբվենցիոն ծրագրերի համար ՀՀ կառավարությունը տրամադրել է 3.5 մլրդ դրամ:

Նախատեսված աշխատանքներից ճանապարհների բարեկարգումը հիմնականում ավարտել են, մյուսները շինարարության տարբեր փուլերում են: Խոշորացումից հետո Կառավարություն-համայնք գործակցությամբ 4 մանկապարտեզ է հիմնանորոգվել, շահագործման կհանձնվեն մինչեւ տարեվերջ:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ՔԱՂԱՔԱՑՈՒՅ ԳՈՒՄԱՐ «ՔԵՐԹԵԼՈՒ» ՄԻՋՈՑ Է

2020 թվականին Ազգային ժողովում արտահերթ ռեժիմով ընդունվեց «ՀՀ հարկային օրենսգրքում» փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, որով կատարվեց գույքահարկի գործող դրույքաչափերի փոփոխություններ, որը դարձավ հակասական դժգոհությունների պատճառ:

«Գույքահարկի մասին» օրենքի համաձայն՝ շենքերի, շինությունների կադաստրային գնահատումն իրականացվում է երեք տարին մեկ անգամ՝ հաջորդ երեք տարիների գույքահարկի հաշվարկման համար:

Համաձայն օրենսդրական փոփոխությունների՝ գույքահարկի ավելի բարձր դրույքաչափերի անցնելու ժամկետը սահմանվել է վեց տարի: Այսպիսով, անշարժ գույքի սեփականատերերն առաջին անգամ գույքահարկի նոր սանդղակով վճարում կկատարեն 2021 թվականի դեկտեմբերին՝ գույքահարկի 25 տոկոսը, 2022 թվականին՝ 30 տոկոսը, 2023 թվականին՝ 35 տոկոսը, 2024 թվականին՝ 50 տոկոսը, 2025 թվականին՝75 տոկոսը, 2026 թվականին՝ 100 տոկոսը:

Այս տոկոսային հարաբերակցությունը հասկանալու համար կարող ենք սահմանել հետեւյալ օրինակը՝ վերցնելով գույքահարկի համար մինիմալ արժեք 20 հազար դրամ: Գրաֆիկին նայելով՝ կարող եք հասկանալ, թե ինչ փոփոխության է ենթարկվել գույքահարկը՝ թանկանալով գրեթե 4 անգամ:

Համաձայն որոշ տնտեսագետների՝ սա արվում է մեկ նպատակով: Քանի որ իշխանությունները որոշում են կայացրել պետական բյուջեից ֆինանսներ չհատկացնել տեղական ինքնակառավարման մարմիններին, այդ պատճառով անհրաժեշտություն է առաջանում ստեղծել կայուն եկամուտ ՏԻՄ գործունեությունը ապահովվելու եւ համայնքի կարիքները հոգալու համար:

Որքան էլ շատ են բողոքները, որ ՀՀ-ում գույքահարկը դարձել է 100%, այնուամենայնիվ ՀՀ կառավարությունը չի նախատեսում դրանք կրկին վերանայել: Իսկ հարկային օրենսգրքի նոր փոփոխությունները գույքահարկի մասին որեւէ տեղ չեն պարունակում:

Գույքահարկից ազատվում են՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ գծային ինժեներատրանսպորտային շինությունները, եթե դրանցից օգտվելու համար վճար չի գանձվում.

2) ջրամբարները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական սեփականություն համարվող պատմամշակութային նշանակության հարկվող օբյեկտ համարվող շինությունները:4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված (մահացած), ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած եւ օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց (կամ ընտանիքի անդամներին) պատկանող գույքը՝ մինչեւ այդ անձանց զավակներից մեկի 18 տարին լրանալը.

5) սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամները՝ այդ ավտոմեքենաների մասով եւ այլոք:

Առաջին հայացքից ամեն բան կարգին է եւ ոչինչ չկա մտահոգվելու, սակայն ArmLur.am-ը, զրուցելով ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Թադեւոս Ավետիսյանի հետ, առանձնացրել է կետեր՝ ինչ թիրախներ կան այս օրենքի շառավղում:

«Գույքահարկի ավելացման փաթեթավորումը, որ բերեցին, ասում էին մենք փորձում ենք գույքահարկով մեղմել սոցիալական անարդարությունը, որը գալիս էր եկամտային հարկի համահարթեցումից: Փորձեցին պրոգրեսիվ հարկման անվան տակ բարձրացնել գույքահարկի դրույքաչափը: Սա հիմնականում ոչ թե հարստության հարկման տարր ունի, այլ իրականում հարկ «քերթելու» դասական դրսեւորում է, որովհետեւ հիմնական բեռը թողնում են միջին ու ցածր եկամուտ ունեցող խավի վրա»,- ասում է Ավետիսյանը:

Պատգամավորն օրինակներ է բերում նաեւ, թե ինչպես է օգտագործվում Երեւանում վճարված գույքահարկը եւ ինչպիսի անհիմն ծախսերում է ներառվում:

«Օրինակ՝ Կետրոնում իր հայրական տանը բնակվող թոշակառուն իր ամբողջ թոշակը պետք է վճարի որպես գույքահարկ, այն էլ չի բավականացնելու: Այսինքն, պետք է վաճառեն: Եվ իշխանությունն էլ է ասում վաճառեք, գնացել գյուղում տուն գնեք կամ մեկ այլ տեղում, որտեղ գույքահարկն ավելի քիչ է: Սա անարդար է»:

Երկրորդ կարեւոր կետով, ըստ Թադեւոս Ավետիսյանի, իշխանությունն ասում է՝ օրենքով բարձրացրել ենք գույքահարկը համայնքներում, գնացեք մարդ «քերթեք», պետությունից գումար չուզեք եւ ձեր գլուխն ինքներդ պահեք:

Այսինքն, վարկածը, որ գույքահարկի նոր օրենքով պետությունը միայնակ է թողնում ՏԻՄ-երին սեփական ծախսերի հետ, միանշանակ է:

Երրորդ կարեւոր հարցը. Անդրադառնալով Երեւանում գույքահարկի միջոցով կատարած ծախսերին՝ Ավետիսյանն ընդգծում է. «Այդ գույքահարկը, որ «քերթում եք»՝ դա անում եք միայնակ թոշակառուից տունը խլելով: Օբյեկտիվ հարց է առաջանում. այդ փողը, որ հավաքում եք Երեւանի քաղաքապետարան, ինչ եք անում այդ գումարը: Պարգեւատրումներ եք անում, հասկացանք, աշխատավարձեր եք ստանում, հասկացանք, էլեկտրոմոբիլներ եք գնում, հասկացանք, այդ թվում՝ օրինակ, Տրանսպորտի վարչության պետը: Հետաքրքիր է նա էլետրոմոբիլով է պտտվում եւ այդպես է տեղեկանում տրանսպորտային խնդիրներից»:

Հավաքագրված գույքահարկի ծախսերը անխնա ծախսելու մեկ այլ դրսեւորում Երեւանի քաղաքապետարանի կողմից, Ավետիսյանը նկատում է, որ Նոր Նորքի ասֆալտապատումն է: Նրա խոսքով տարին մի քանի անգամ ասֆալտապատում է իրականացվում՝ փոսեր փորելով ավելի խորը, քան սահմանային խրամատները: Այս գործընթացն էլ ուղեկցվում է կոռուպցիոն ռիսկերով, քանի որ ասֆալտապատող ընկերությունները հաճախ փոխկապակցված են լինում իշխանականների հետ:

Որպես եզրակացություն՝ կարող ենք ասել, որ ՀՀ քաղաքացու հաշվին երկիրը պահելու պատճառով է Նիկոլ Փաշինյանը հարկատու քաղաքացուն անվանում հերոս: Այո՛, գուցե հերոս են, որ այսքան հարկային պարտավորություններ մտցնելուց հետո, դեռ գոյատեւում են:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԲԻԹՔՈՒՆԻ ՓՈԽԱՐԺԵՔԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է 99,000 ԴՈԼԱՐԸ

Բիթքոին կրիպտոարժույթի արժեքը շարունակում է բարձրանալ՝ գերազանցելով 99,000 դոլարը և թարմացնելով պատմական առավելագույնը:

Ըստ աշխարհի խոշորագույն կրիպտոբորսայի՝ Binance-ի տվյալների՝ վիրտուալ արժույթի արժեքը հասել է 98,292 դոլարի:

Binance կրիպտոբորսան Երեւանի ժամանակով ժամը 07:17-ի դրությամբ արձանագրել է, որ կրիպտոարժույթի փոխարժեքը կազմել է 99,100 դոլար՝ ցույց տալով 4,42% աճ: Այնուամենայնիվ, հինգ րոպեի ընթացքում բիթքոինը դանդաղել է՝ հետ իջնելով $98,980-ի մակարդակին (+4,27%):

Կրիպտոարժույթը սկսել է թանկանալ նոյեմբերի 5-ին՝ ԱՄՆ նախագահական ընտրություններում Դոնալդ Թրամփի հաղթանակից հետո:

Binance-ի գործադիր տնօրեն Ռիչարդ Թենգը կանխատեսել է կրիպտոարժույթների ոսկե դարաշրջան այն բանից հետո, երբ Թրամփը կվերադառնաՍպիտակ տուն:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԴԱՆԻԵԼ ԲԵԿ-ՓԻՐՈՒՄՅԱՆ

ՍԱՐԴԱՐԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԸ

Դանիել Աբիսողոմի Բեկ-Փիրումյանը հայ նշանավոր ռազմական գործիչ, Սարդարապատի ճակատամարտի գլխավոր հրամանատար, ազգային հերոս, ռուսական բանակի գնդապետ (1915), հայկական բանակի գեներալ-լեյտենանտ էր, Պողոս Բեկ Փիրումյանի հորեղբոր որդին:

Ծառայությունը Ռուսական բանակում

Դանիել Բեկ-Փիրումյանը ծնվել է 1861 թվականի նոյեմբերի 22-ին Արցախի Խաչեն գավառի Նախիջեւանիկ գյուղում: Ավարտել է Շուշիի քաղաքային ուսումնարանը: Զինվորական ծառայությունը սկսել է 1881 թվականից՝ Երեւանյան գնդում: 1881-1883 թվականներին սովորել է Թիֆլիսի հետեւակային յունկերական ուսումնարանում: 1890 թվականին Դանիել Բեկ-Փիրումյանին շնորհվել է կապիտանի կոչում: 1913 թվականին Դանիել Բեկ-Փիրումյանը փոխգնդապետի կոչումով ավարտել է Օրանիենբաումի սպայական հրաձգային դպրոցի դասընթացները: Եղել է վաշտի, գումարտակի, գնդի հրամանատար: Առաջին համաշխարհային պատերազմի (1914-1918 թվականներ) ժամանակ կռվել է Կովկասյան ռազմաճակատում, աչքի ընկել քաջությամբ, ստացել ռուսական բանակի գնդապետի կոչում, պարգեւատրվել Գեորգիեւյան եւ այլ շքանշաններով ու անվանական զենքով:

Սարդարապատի հերոսամարտում

1918 թվականի մայիսին թուրքական առաջապահ ջոկատները հասել էին Սարդարապատ կայարան՝ ընդհուպ մոտենալով Էջմիածնին: Հայության համար այդ օրհասական պահին վճռական դեր են խաղացել Դանիել Բեկ-Փիրումյանի ռազմաճակատային մեծ փորձը եւ ուժեղ կամային հատկանիշները: Բացառիկ է եղել Դանիել Բեկ-Փիրումյանի դերակատարումը Սարդարապատի ճակատամարտի հաղթանակում, որտեղ նա փաստացի հանդիսացել է այդ ուղղության հայկական զորաջոկատների ընդհանուր հրամանատարը: Հենց Դանիել Բեկ-Փիրումյանի անմիջական ջանքերով հնարավոր եղավ կազմակերպել Սարդարապատի ռազմաճակատի գիծը եւ արժանի հակահարված տալ թուրք զավթիչներին:

Սարդարապատի ճակատամարտի վճռական պահին, մարտի հետագա ղեկավարությունը հանձնելով Ալեքսանդր Շնեուրին, նետվել է կռվի դաշտ: Ցուցադրելով զինվորական հմտություն եւ արիություն՝ իր գլխավորած ուժերով ռազմաճակատի կենտրոնական մասում ջախջախել ու հետ է շպրտել թուրք զավթիչներին:

57-ամյա Դանիել Բեկ-Փիրումյանին 1918 թվականին շնորհվել է գեներալ-մայորի կոչում: Նորանկախ Հայաստանի հանրապետության օրոք նա առաջիններից մեկն էր, ով պաշտոնապես ստացավ այդ կոչումը: Նշենք, որ Սարդարապատի հերոսամարտին մասնակցել եւ մարտական իսկական սխրանքներ է գործել նաեւ Դանիել Բեկ-Փիրումյանի հորեղբորորդի Պողոս Բեկ-Փիրումյանը՝ որպես Ղարաբաղի 5-րդ (մահապարտների) գնդի հրամանատար:

Կյանքի վերջին տարիներ

Հայաստանի առաջին հանրապետության տարիներին Դանիել Բեկ-Փիրումյանը տարբեր պաշտոններ է զբաղեցրել Հայաստանի ռազմական գերատեսչությունում: 1919 թվականի վերջին նա ստացել է գեներալ-լեյտենանտի կոչում եւ նշանակվել Կարսի բերդի պարետ: Ցավոք, ավտովթարի պատճառով նա կոտրել է ոտքը, որի պատճառով էլ չի կարողացել պատշաճ ձեւով կազմակերպել Կարսի բերդի եւ Կարսի ճակատի ինքնապաշտպանությունը 1920 թվականի աշնանը կայացած թուրք-հայկական պատերազմի ժամանակ: Իսկ 1920 թվականի հոկտեմբերի 30-ին թուրքերի կողմից Կարսի անառիկ բերդի գրավման ժամանակ գերի է ընկել: 1921 թվականի հունվարին նրան տեղափոխել են Ալեքսանդրապոլ, ապա հանձնել ռուսական 11-րդ Կարմիր բանակի ներկայացուցիչներին:

Խորհրդայնացված Հայաստանում մոլեգնում էր բոլշեւիկյան տեռորը, եւ թուրքական գերությունից ազատվելուց անմիջապես հետո Սարդարապատի հերոսամարտի պանծալի հրամանատար Դանիել Բեկ-Փիրումյանը հայ բարձրաստիճան այլ սպաների հետ բոլշեւիկների կողմից գնդակահարվել է Ղարաքիալիսա-Դիլիջան ճանապարհին: Հայտնի է, որ գեներալի դին հնարավոր է եղել գաղտնի տեղափոխել Էջմիածին եւ թաղել Սուրբ Գայանեի վանքին կից գերեզմանատանը: Նույն 1921 թվականին, այլեւս չդիմանալով բոլշեւիկյան արհավիրքին, Երեւանում ինքնասպան է եղել Սարդարապատի մեկ այլ հերոս՝ Պողոս Բեկ-Փիրումյանը:

Հետաքրքիր փաստեր

Բեկ-Փիրումյանի զինվորական համազգեստի աստառը կարմիր էր: Մարտի դուրս գալուց առաջ նա շրջում էր համազգեստը եւ կարմիր կողմը դեպի դուրս էր հագնում համազգեստը: Նրան անվանում էին «Կարմիր Վարդան»՝ զուգահեռ անցկացնելով Ավարայրի հերոս Վարդան Մամիկոնյանի հետ: Կարմիր աստառով մարտին դուրս գալու մասին երկու վարկած կա: Ըստ առաջին վարկածի՝ զորքի մարտական ոգին չկոտրելու համար նա չէր ուզում, որ մարտի դաշտում վիրավորվելու դեպքում որեւէ մեկը տեսներ իր արյունը: Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության թանգարանի տնօրեն Փահլեւանյանի կարծիքով երկրորդ վարկածն ավելի հավանական է՝ Փիրումյանը ցանկանում էր թաքցնել զինվորական ուսադիրներն ու տարբերանշանները, որ թշնամին չիմանա, թե ով է մարտի դաշտում:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀՀ ԶՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԸՄԲՇԱՄԱՐՏՈՒՄ ԱՐԴԵՆ 12 ՄԵԴԱԼ Է ՆՎԱՃԵԼ

Հայ ըմբիշները շարունակում են հաջող մրցելույթները Երեւանում ընթացող Զինվորականների ըմբշամարտի աշխարհի 37-րդ առաջնությունում. մրցումային երկրորդ օրը՝ նոյեմբերի 21-ին, ՀՀ ԶՈՒ հավաքականի անդամները նվաճել են 1 արծաթե եւ 4 բրոնզե մեդալ:

Առաջնության փոխչեմպիոնի կոչմանն արժանացել է հունահռոմեական ոճի ըմբիշ, 55 կգ քաշային Տիգրան Մինասյանը: Եզրափակչում նա զիջել է ԿԺԴՀ ներկայացուցչին:

Բրոնզե մեդալներ են նվաճել Շանթ Խաչատրյանը (72 կգ), Հրայր Ալիխանյանը (74 կգ), Արման Ավագյանը (79 կգ) եւ Սամվել Գրիգորյանը (82 կգ):

Բրոնզե մեդալի համար պայքարում Խաչատրյանը 10:1 հաշվով վստահ հաղթանակ է տարել Շվեյցարիայի ներկայացուցչի նկատմամբ, Ալիխանյանը 12:2 հաշվով հաղթել է Սաուդյան Արաբիայի ներկայացուցչին, Ավագյանը 7:4 հաշվով առավելության է հասել իտալացի ըմբիշի նկատմամբ, իսկ Գրիգորյանը 9:1 հաշվով հաղթանակի է հասել Ղազախստանի ներկայացուցչի նկատմամբ:

ԿԳՄՍՆ-ից տեղեկացնում են, որ ՀՀ ԶՈՒ հավաքականի անդամները Զինվորականների ըմբշամարտի աշխարհի 37-րդ առաջնությունում արդեն 12 մեդալ են նվաճել՝ 3 ոսկե, 3 արծաթե եւ 6 բրոնզե:

Զինվորականների ըմբշամարտի աշխարհի առաջնությանը մասնակցելու նպատակով Հայաստան է ժամանել 24 երկրի պատվիրակություն (ավելի քան 400 անձ): Առաջնությունն անցկացվում է Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում նոյեմբերի 20-22-ը: Մուտքն ազատ է:

ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի մուայթայի հավաքականը 2 արծաթե եւ 1 բրոնզե մեդալ է նվաճել Կոսովոյի մայրաքաղաք Պրիշտինայում անցկացված ավագ տարիքի պատանիների, մինչեւ 23 տարեկաններ եւ մեծահասակների Եվրոպայի առաջնությունում:

Հայաստանի ներկայացուցիչներից փոխչեմպիոնի կոչմանն ու արծաթե մեդալի արժանացել է 57 կգ քաշային Նարեկ Խաչիկյանը, որը հանդես է եկել մեծահասակների պայքարում:

Փոխչեմպիոն է դարձել նաեւ մինչեւ 16 տարեկանների առաջնությունում հանդես եկող Արթուր Խաչատրյանը:

Հայաստանի վերջին ներկայացուցիչ, 57 կգ քաշային Լուսի Տեր-Դավթյանը մինչեւ 23 տարեկանների առաջնությունում զբաղեցրել է երրորդ տեղն ու նվաճել բրոնզե մեդալ:

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՔԱՌՅԱԿԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 100-ԱՄՅԱԿ

Նոյեմբերի 24-ին, ժամը 19:00 Արամ Խաչատրյան համերգասրահում կանցկացվի համերգ-հանդիսություն՝ նվիրված աշխարհի ամենաերկարակյաց լարային քառյակի՝ Կոմիտասի անվան լեգենդար քառյակի հիմնադրման 100-ամյակին:

Համերգի ընթացքում հանդիսականները վերստին հնարավորություն կունենան ունկնդրելու քառյակի բարձրարվեստ կատարումները:

Կոմիտասի անվան ազգային քառյակին նվիրված երաժշտական ողջույններով հանդես կգան Հայաստանի պետական կամերային նվագախումբը, Արեգ Առուստամյան ջազ-տրիոն, Բարսեղ Թումանյանը, Հրաչուհի Բասենցը, դաշնակահար-դիրիժոր Վահագն Պապյանը, դաշնակահարուհի Կարին-Հելլման Գեւորգյանը:

Կոմիտասի անվան քառյակն ստեղծվել է 1924թ. նոյեմբերին Մոսկվայի կոնսերվատորիայի ուսանողներ Ավետ Գաբրիելյանի, Լեւոն Օհանջանյանի, Միքայել Տերյանի եւ Սարգիս Ասլամազյանի նախաձեռնությամբ: 1925թ. հունվարի առաջին օրերին սկսել է իր կանոնավոր փորձերն ու պարապմունքները՝ պրոֆեսոր Ե.Մ. Գուզիկովի ղեկավարությամբ: Վերջինս կազմել է նորաստեղծ անսամբլի կատարողական ծրագիրը՝ նախատեսված հունվարից մինչեւ ուսումնական տարեվերջ: Առաջին ստեղծագործությունը, որի վրա պետք է աշխատել են երիտասարդ երաժիշտները, Բեթհովենի N 1 կվարտետն էր, որի կատարման նախապատրաստումը տեւել է շուրջ երկու ամիս: Առաջին ելույթը տեղի է ունեցել 1925 թ. մարտի 1-ին: 1932թ. մայիսին Հայկական ԽՍՀ կառավարությունը քառյակին շնորհել է Կոմիտասի անունը՝ դեռեւս մեծ երգահանի կենդանության օրոք:

● Նոյեմբերի 30-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Փարիզյան դատավճիռ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-4.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ո՞րն է աշխատանքային պայմանագրի կնքման կարգը:

Մոնիկա Ղումաշյան (19 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գրավոր աշխատանքային պայմանագիրը կնքվում է երկու օրինակից կողմերի, իսկ մինչեւ տասնչորս տարեկան աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի դեպքում՝ ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ խնամակալի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որի մեկ օրինակը գործատուն հանձնում է աշխատողին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին: Աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել նաեւ կողմերի էլեկտրոնային ստորագրությամբ: Էլեկտրոնային ստորագրությամբ կնքված աշխատանքային պայմանագրի մեկ օրինակը էլեկտրոնային եղանակով փոխանցվում է աշխատողին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին:

Աշխատանքի անցնելուց առաջ գործատուն կամ նրա լիազորած անձը պարտավոր է աշխատանքի ընդունվող անձին պատշաճ ծանոթացնել աշխատանքի պայմաններին, կոլեկտիվ պայմանագրին (դրա առկայության դեպքում), ներքին կարգապահական կանոններին, աշխատավայրում նրա աշխատանքը կանոնակարգող գործատուի այլ իրավական ակտերին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատողը պարտավոր է աշխատանքային պայմանագրում նշված օրն անցնել աշխատանքի: Աշխատանքային պայմանագրում նշված օրն անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալը հիմք է աշխատանքային պայմանագրի լուծման համար:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է Մաքսային միության առրանքը:

Լեռնիկ Գրիգորյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մաքսային միության մաքսային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի համաձայն՝ Մաքսային միության ապրանքները Մաքսային միության մաքսային տարածքում գտնվող ապրանքներն են, որոնք ամբողջությամբ արտադրվել են Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում, ներմուծվել են Մաքսային միության մաքսային տարածք եւ ստացել Մաքսային միության ապրանքների կարգավիճակ՝ նշված օրենսգրքին եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան, պատրաստվել են Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում նշված ենթակետի երկրորդ եւ երրորդ պարբերություններում նշված ապրանքներից եւ (կամ) օտարերկրյա ապրանքներից եւ, նշված օրենսգրքին եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան, ձեռք են բերել Մաքսային միության ապրանքների կարգավիճակ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մաքսային միության մաքսային օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգի դեպքում Մաքսային միության մաքսային տարածք ավելի վաղ ներմուծված ապրանքները կամ ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները, որոնք ձեւակերպվել են «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով, այդ տարածքից արտահանվում են առանց ներմուծման մաքսատուրքերի գումարների վճարման եւ (կամ) ներմուծման մաքսատուրքերի վճարված գումարների վերադարձման (հաշվանցման) եւ առանց ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանը ներկայացնող մարզիկները Երեւանում ընթացող Զինվորականների ըմբշամարտի 37-րդ աշխարհի առաջնությունում նվաճեցին 14 մեդալ:

Զինվորականների ըմբշամարտի 37-րդ աշխարհի առաջնությունում Հայաստանի Հանրապետության ԶՈՒ հավաքականի մարզիկները ընդհանուր առմամբ նվաճեցին 14 մեդալ՝ 3 ոսկե, 3 արծաթե եւ 8 բրոնզե:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-2 - 6 + 4 + 8
Կոտայքի լեռներ	-1 - 5 + 4 + 9
Կոտայքի նախալեռներ	-1 + 3 +9 + 12
Գեղարքունիք	- 3 - 7 + 5 + 8
Լոռի	-1 - 5 +10 + 13
Տավուշ	- 2 + 3 +12 + 14
Արագածոտնի լեռներ	- 2 - 6 + 2 + 7
Արագածոտնի նախալեռներ	-2 + 2 + 8 + 13

Արարատ	-1 + 2 +13 + 15
Արմավիր	-2 + 2 +13 + 15
Վայոց ձորի լեռներ	-1 + 2 + 3 + 6
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +12 + 14
Սյունիքի հովիտներ	-1 + 5 + 8 + 12
Սյունիքի նախալեռներ	+1 + 5 +12 + 16
ԼՂՀ	0 + 4 +11 + 14
Երեւան	+ 6 + 8 + 11 + 13

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.11.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*